

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY  
FACULTY OF HISTORY

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ**  
**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

**ИСТОРИЯ И КУЛЬТУРА**  
**АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ**

**HISTORY AND CULTURE**  
**JOURNAL OF ARMENIAN STUDIES**

**№ 2**

**ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN**  
**ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS**  
**2020**

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ**

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**  
*խմբագրական խորհուրդ՝*

**Արման Եղիազարյան** (խմբագիր, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Զուգասյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**  
*Редакционная коллегия:*

**Арман Егиазарян** (редактор, д.и.н., проф.), **Арам Симонян** (директор Института Арменологических исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсисян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**  
*Editorial Board:*

**Arman Yeghiazaryan** (editor, Doctor of Sciences, prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, associate prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, associate prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History).

ISSN 1829-2771

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**  
**СОДЕРЖАНИЕ / CONTENT**

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY**

<b>Սեյրան Չաքարյան</b> - ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ, ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԵՎ ԻՄԱՍՏԱՍԻՐՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	8
<b>Сейран Закарян</b> - ИСТОЧНИКИ ФИЛОСОФИИ ГРИГОРА ТАТЕВАЦИ, ЕГО ИДЕИ И СПЕЦИФИКА ЕГО СПОСОБА ФИЛОСОФСТВОВАНИЯ.....	16
<b>Seyran Zakaryan</b> - GRIGOR TATEVATSI'S PHILOSOPHICAL SOURCES, IDEAS AND PECULIARITIES OF THE WAY OF PHILOSOPHIZING.....	17
<b>Հասմիկ Ամիրջանյան</b> - ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՅՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԿՈՐ-ՎԱՐՉԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.....	19
<b>Асмик Амирджанян</b> - ДУХОВНО-АДМИНИСТРАТИВНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ГУКАСА КАРНЕЦИ.....	27
<b>Hasmik Amirjanyan</b> - ADMINISTRATIVE-SPIRITUAL ACTIVITIES OF GHUKAS KARNETSI.....	28
<b>Վարդան Միսիրջանյան, Գոհար Ղամբարյան</b> - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. ՍԵՎԱՆԼԱ ԼՅԻ ԱՎԱԶԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ XIX ԴԱՐԻ 30-ԱՎԱՆՆԵՐԻՆ.....	29
<b>Вардан Мхитарян, Гоар Гамбарян</b> - ИНФОРМАЦИОННАЯ ВОЙНА: НАСЕЛЕННЫЕ ПУНКТЫ БАСЕЙНА ОЗЕРА СЕВАН В 30-Х ГОДАХ XIX ВЕКА.....	39
<b>Vardan Mkhitaryan, Gohar Ghambaryan</b> - INFORMATION WAR: SETTLEMENTS OF THE LAKE SEVAN BASIN IN THE 30s of XIX.....	39
<b>Լիլիթ Մակարյան</b> - ԱՊԱՐԱՆԻ ՎԱՐԴԵՆԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԻ ԵՎԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԵՇԳՐՏՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐԶ.....	45
<b>Лилит Макарян</b> - К ВОПРОСУ О ПЕРЕСЕЛЕНИИ СЕЛА ВАРДЕНИС АПАРАНА И УТОЧНЕНИИ НАЗВАНИЙ МЕСТНЫХ ЦЕРКВЕЙ.....	49
<b>Lilit Makaryan</b> - ON RESETTLEMENT ISSUE OF VARDENIS VILLAGE OF APARAN AND NAME CLARIFICATION OF LOCAL CHURCHES.....	49
<b>Ֆելիքս Մովսիսյան</b> - ՌՈՒՄԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ XIX ԴԱՐԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ.....	50
<b>Феликс Мовсисян</b> - ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ РОССИЙСКИХ АРМЯН ОБ ИТАЛЬЯНСКОЙ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ XIX ВЕКА.....	66
<b>Felix Movsisyan</b> - ARMENIAN PERIODICALS OF RUSSIA ON THE 19TH CENTURY NATIONAL STRUGGLE OF ITALY.....	67
<b>Սուսաննա Առաքելյան</b> - ԲԱՔԿԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ-ԼՈՒՄԱՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԴՊՐՈՑԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1864-1896 ԹԹ.....	69

<b>Сусанна Аракелян</b> – ОБРАЗОВАТЕЛЬНО-ПРОСВЕТИТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОГО ГУМАНИТАРНОГО ОБЩЕСТВА БАКУ И СТРОИТЕЛЬСТВО ШКОЛ В 1864-1896. ....	87
<b>Susanna Arakelyan</b> – EDUCATIONAL AND SCHOOL-BUILDING ACTIVITIES OF ARMENIAN HUMANITARIAN SOCIETY OF BAKU IN 1864-1896. ....	87
<b>Գեղամ Բաղայան</b> – ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ [Սևերակի, Ջերմուկի, Միդիատի, Մծբինի (Նիսիբին) և Վերանշեհիրի գավառները].....	88
<b>Гегам Бадалян</b> – ИСТОРИКО-НАРОДНОЕ ОПИСАНИЕ ЗАПАДНОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН (Северакский, Джермукский, Мидиатский, Мцбинский (Нисибинский) и Вераншехирский уезды). ....	115
<b>Gegham Badalyan</b> – HISTORICAL-NATIONAL DESCRIPTION OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE (provinces Severak, Jermuk, Midiat, Mtsbin (Nisibin) and Veranshehir). ....	115
<b>Աննա Վարդանյան</b> – ԴԻԱՆԱ ԱԲԳԱՐ. ՀԱՅ-ԵԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ .....	117
<b>Анна Варданян</b> – ДИАНА АБГАР - «МАТЬ АРМЕНИИ НА ДАЛЬНЕМ ВОСТОКЕ»: ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ. ПО СЛЕДАМ ИСТОКОВ АРМЯНО-ЯПОНСКИХ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ОТНОШЕНИЙ. ....	123
<b>Anna Vardanyan</b> – DIANA ABGAR -“MOTHER OF ARMENIA IN THE FAR EAST”: LIFE AND ACTIVITIES. TRACING BACK TO ARMENIAN-JAPANESE HISTORICAL AND CULTURAL RELATIONS. ....	124
<b>Գայանե Հովհաննիսյան</b> – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ 1926 Թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ .....	125
<b>Гаяне Оганнисян</b> – НАСЕЛЕНИЕ НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ПО ВСЕСОЮЗНОЙ ПЕРЕПИСИ 1926 г. ....	132
<b>Gayane Hovhannisyan</b> – POPULATION OF THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION ACCORDING TO THE ALL-UNION CENSUS (1926). ....	133
<b>Արտակ Խաչատրյան</b> – ԲՈՆԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻՆ ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ.....	134
<b>Артак Хачатрян</b> – НАЦИОНАЛЬНЫЙ ВОПРОС В ВОСПРИЯТИИ БОЛЬШЕВИСТСКОЙ ПАРТИИ В ДОСОВЕТСКИЙ ПЕРИОД (1903-1917 гг.).....	141
<b>Artak Khachatryan</b> – NATIONAL ISSUE IN THE PERCEPTIONS OF THE BOLSHEVIK PARTY IN THE PRE-SOVIET PERIOD (1903-1917). ....	141
<b>Մանյակ Երանոսյան</b> – ՀԱԿՈԲ ԶԱՎՐԻՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԶՐՈՒՄՈՒՄ (1916 Թ. ՀՈՒՆԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ) .....	142
<b>Маняк Ераносян</b> – ДЕЯТЕЛЬНОСТЬ ЯКОВА ЗАВРИЯНА В ЭРЗРУМЕ (ИЮЛЬ-СЕНТЯБРЬ 1916 Г.).....	149
<b>Manyak Yeranosyan</b> – НАКОВ ZAVRIYAN'S ACTIVITIES IN ERZRUM (1916 JULY-SEPTEMBER). ....	150

<b>Գևորգ Կեսոյան</b> – ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԹԻՎ – ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....	151
<b>Геворг Кесоян</b> – СИТУАЦИЯ НА ГРАНИЦЕ ТУРЦИЯ-СОВЕТСКАЯ АРМЕНИЯ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.....	159
<b>Gevorg Kesoyan</b> – THE SITUATION ON THE TURKISH-SOVIET ARMENIAN BORDER DURING THE GREAT PATRIOTIC WAR.....	160
<b>Արման Սաֆարյան</b> – ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՎԱՆ- ԴՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՐԸ՝ ՄՈՒՆԻՏԻՄԵՆՏԻՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԲԱՎ- ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....	161
<b>Арман Сафарян</b> – РОЛЬ ТРАДИЦИЙ АРМЯНСКОЙ ПУБЛИЦИСТИКИ В ПРОЦЕССЕ ОСВЕЩЕНИЯ ЭКОЛОГИЧЕСКОЙ ПРОБЛЕМАТИКИ В МУЛЬТИМЕДИЙНОМ ПРОСТРАНСТВЕ.....	164
<b>Arman Safaryan</b> – THE ROLE OF ARMENIAN OPINION JOURNALISM IN THE COVERAGE OF ECOLOGICAL ISSUES IN MULTIMEDIA.....	165
<b>Սարգիս Սկրտչեան</b> – ՊԱՆԹԻՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ- ՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՐՉԵՐԻՆ - 21- ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԵՐԻՆ.....	166
<b>Саргис Мкртчян</b> – ДЕЯТЕЛЬНОСТЬ ПАНТЮРКИСТСКИХ ОРГАНИЗАЦИЙ В ИРАНЕ В КОНЦЕ XX – НАЧАЛЕ XXI ВЕКОВ.....	174
<b>Sargis Mkrtchian</b> – ACTIVITIES OF PAN-TURKISH ORGANIZATIONS IN IRAN AT THE END OF THE 20TH CENTURY - AT THE BEGINNING OF THE 21ST CENTURY.....	174
<b>Սերի Նաջարյան, Հռիփսիմե Մուրադյան</b> – ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈ- ՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎԱԿՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (2001-2016թթ.).....	176
<b>Мери Наджарян, Рипсима Мурадян</b> – ПОЗИЦИЯ ГЕРМАНИИ В ВОПРОСЕ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН (2001-2016 ГГ.).....	183
<b>Meri Najaryan, Hripsime Muradyan</b> – GERMANY’S STAND ON THE ISSUE OF INTERNATIONAL RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE (2001-2016).....	184
<b>ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ / ТЕОРИЯ ИСТОРИИ / THEORY OF HISTORY</b>	
<b>Գևորգ Եաղարյան</b> – ԱՆՑՅԱԼԻ ՊԱՏՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎՆԱՊԱՐ- ՀԻՆ (ԹՈՄԱՍ ԶԱՐԼԱՅԼԸ ԵՎ ՆՐԱ «ԴԱՐՁԵԱԼ Ի ԿԵՐԱՅ ՊԱՏՄՈՒ- ԹԵԱՆ» ՀՈՂԿԱԾԸ).....	185
<b>Геворг Тшагарян</b> – НА ПУТИ ИСТОРИЗАЦИИ ПРОШЛОГО (ТОМАС КАРЛЕЙЛЬ И ЕГО СТАТЬЯ «СНОВА ОБ ИСТОРИИ»).....	205
<b>Gevorg Tshagharian</b> – ON THE PATHWAY OF HISTORICIZATION OF THE PAST (THOMAS CARLYLE AND HIS ESSAY «ON HISTORY AGAIN»).....	206
<b>Լիզա Զարիմյան</b> – ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ «ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ» ԳՈՏՈՒ Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԱ-ՖԻԴԱՆՅԱՆԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ.....	207
<b>Лица Каримян</b> – КОНЦЕПЦИЯ АРМЯНО-ВИЗАНТИЙСКОЙ “КОНТАКТНОЙ” ЗОНЫ В. АРУТЮНОВОЙ-ФИДАНЯН.....	216

**Liza Karimyan - V. ARUTYUNOVA-FIDANYAN'S CONCEPT OF ARMENIAN-BYZANTINE "CONTACT" ZONE.** ..... 217

**ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY**

**Ֆրինա Բաբայան - ՀՈՍՏՈՒՆ (ՈՍՏԱՆ) ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՏԵՂԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (2005-2006 ԹԹ.)** ..... 218

**Фрина Бабаян - РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК СРЕДНЕВЕКОВОГО ПОСЕЛЕНИЯ ХОСТУН (2005-2006 ГГ.)** ..... 222

**Frina Babayan - RESULTS OF EXCAVATIONS AT THE MEDIEVAL SETTLEMENT OF HOSTUN (2005-2006 SEASONS).** ..... 223

**Ռաֆիկ Նահապետյան - ԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅՈՑ ՄԵՉ (XIX դ. - XX դ. սկիզբ)** ..... 228

**Рафик Наапетян - ТРАДИЦИОННАЯ СИСТЕМА РАССЕЛЕНИЯ АРМЯН (XIX В. - НАЧАЛО XX В.)** ..... 235

**Rafik Nahapetyan - THE TRADITIONAL SYSTEM OF SETTLEMENT OF ARMENIANS (XIX CENTURY - BEGINNING OF XX CENTURY).** ..... 235

**ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES**

**Արման Եղիազարյան - ՀՅՂ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂԹԱԿԱՅՐԵՐՈՒՄ 1920-ԱՎԱՆ ԹԹ. ԵՎ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ** ..... 237

**Арман Егиазарян - ДЕЯТЕЛЬНОСТЬ АРФ ДАШНАКЦУТЮН В ДИАСПОРЕ В 1920-Е ГОДЫ И ПРОБЛЕМА СОЗЫВА ОБЩЕДИАСПОРНОГО КОНГРЕССА.** ..... 247

**Arman Yeghiazaryan - ACTIVITIES OF ARF DASHNAKTSUTYUN IN DIASPORA IN THE 1920S AND THE PROBLEM OF CONVENING A DIASPORA CONGRESS.** ..... 248

**Հայկ Մարտիրոսյան - ՍՓՅՈՒՌՔԱԳՅԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ.** ..... 249

**Айк Мартиросян - СОТРУДНИЧЕСТВО КОМИТЕТА ПО КУЛЬТУРНЫМ СВЯЗЯМ С АРМЯНАМИ ДИАСПОРЫ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ США.** ..... 257

**Hayk Martirosyan - COOPERATION OF THE COMMITTEE OF THE CULTURAL RELATIONS WITH ARMENIANS OF DIASPORA WITH THE ARMENIAN COMMUNITY OF THE USA.** ..... 257

**Էդիկ Մինասյան - ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱԴՆԵՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 21-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՍՅԱԿՆԵՐՈՒՄ** ..... 259

**Эдик Минасян - ДЕЯТЕЛЬНОСТЬ ВСЕАРМЯНСКИХ ФОНДОВ, ОБЩЕСТВЕННЫХ И БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЙ ПО УКРЕПЛЕНИЮ ОТНОШЕНИЙ АРЦАХ-ДИАСПОРА В ПЕРВЫЕ ДЕСЯТИЛЕТИЯ XXI ВЕКА.** ..... 272

**Edik Minasyan – ACTIVITIES OF THE ALL-ARMENIAN FUNDS, NGOS AND CHARITABLE ORGANIZATIONS TO STRENGTHEN ARTSAKH-DIASPORA RELATIONS IN THE FIRST DECADES OF THE 21ST CENTURY.** ..... 273

**Կարեն Մկրտչյան – ԱՐՏԱԳԱՂԹԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ** ..... 274

**Карен Мкртчян – МИГРАЦИЯ И ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ В АРМЯНСКОЙ ОБЩИНЕ ИРАНА.** ..... 280

**Karen Mkrtchyan – MIGRATION AND EDUCATIONAL PROBLEMS IN THE ARMENIAN COMMUNITY OF IRAN.** ..... 281

**ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ / ПЕДАГОГИКА / PEDAGOGY**

**Սերի Հովհաննիսյան – ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ (ծննդյան 180-ամյակի առթիվ)**..... 282

**Мери Оганнисян – ЦЕННОСТНЫЕ ПОДХОДЫ К ОБРАЗОВАНИЮ ПО ГАЗАРОСУ АГАЯНУ.** ..... 289

**Meri Hovhannisyan – VALUE-BASED APPROACHES TO EDUCATION BY GHAZAROS AGHAYAN.** ..... 289

**ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW**

Էրիկ Գալեգիսի ՄԻՆԱՍՅԱՆ, ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-2018 թթ.), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 380 էջ + 16 էջ ՆԵՐՂԻՐ:..... 291

ԲԱԶՄԱԿԱՍՏԱԿ ԱԶԳԱԳՐԱԳԵՏԻ ՆՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 293

ՄԻՔԱՅԵԼ ԱՐՄԵՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ-17-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ, ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 300 էջ:..... 295

**ՀԱՎԵՐԺԻ ՃԱՍՓՈՐԴՆԵՐ** ..... 298

**ՄԱՀ ԻՄԱՑԵԱԼ. 2020 թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԱՆՄԱՀԱՑԱԾ՝ ԵՊՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՍԱՆԵՐԸ** ..... 315

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ** ..... 318

**INFORMATION ABOUT THE AUTHORS** ..... 320

**Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ** ..... 322

**NOTICE FOR THE AUTHORS** ..... 322

## Հայկ Մարտիրոսյան

### ՍՓՅՈՒՌՔԱՅԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ

**Հիմնաբառեր.** Կոմիտե, սփյուռքահայություն, Ամերիկահայ համայնք, օգնություն, կապեր, փոխայցեր, մշակույթ, հայկական գաղթօջախ, հայրենակցական միություններ:

Պատմական ճակատագրի բերումով հայության շուրջ երկու երրորդը բնակվում է մայր հայրենիքի սահմաններից դուրս, ենթակա է օտար միջավայրի ազդեցություններին և կարիք ունի հայրենիքի օժանդակությանը: Այդ պայմաններում մշտապես խնդիր կա պահպանելու հայրենիք-սփյուռք կապերը՝ փոխօգնության, ազգային շահերը համատեղ պաշտպանելու նպատակով: Հասկանալով դրանց կարևորությունը հայրենիքի և սփյուռքի համար համար՝ մշտապես փորձեր են արվել համատեղ տարբեր միջոցներով պահելու, պահպանելու և ընդլայնելու հայրենիք-սփյուռք կապերը, վերացնելու թյուրըմբռնումները ու գործելու միահամուռ ուժերով: Սակայն այդ փորձերը ոչ միշտ են արդյունավետ: Տարբեր ժամանակներում այդ փորձերը տարբեր չափով են հաջողվել՝ պայմանավորված բազմաբնույթ գործոններով:

Հայոց ցեղասպանությունից հետո ընդլայնվեցին հայկական սփյուռքի աշխարհագրական սահմանները, իսկ գաղթական հայերը լծվեցին նոր պայմաններին հարմարվելու, համայնքային կյանքը կազմակերպելու դժվարին գործին: Այդ գործում հատկապես կարևոր էր հայրենիքի հետ կապերի հաստատումն ու ամրապնդումը: Սփյուռքահայության հետ կապեր հաստատելու հաջողված փորձը եղավ 1964 թ., երբ Հայկական ՍՍՀ մինիստրների սովետի 1964 թ. մայիսի 26-ի թիվ 226 որոշմամբ ստեղծվեց Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն (այսուհետև՝ Կոմիտե)<sup>1</sup>, որի նպատակն էր հաստատել և զարգացնել կապերը սփյուռքահայ համայնքների և, մասնավորապես, այնտեղ գործող այսպես կոչված «առաջադիմական, դեմոկրատական ու հայրենասիրական» կազմակերպությունների, բարեգործական ու մշակութային միություններ հետ<sup>2</sup>: Սփյուռքի կոմիտեի նախագահ նշանակվեց պատմաբան Վարդգես Համազասպյանը, որը պաշտոնավարեց մինչև 1985 թ.: Կոմիտեի կազմում գործում էին տարածաշրջանների հայ համայնքների հետ կապերի բաժիններ (Ասիայի և Աֆրիկայի, Եվրոպայի, Ամերիկայի)<sup>3</sup>: Պետք է նշել, որ Կոմիտեի նպատակներն ու խնդիրներն ածանցվում էին ժամանակաշրջանի գաղափարաբաղաբանական իրողություններին: Առաջին հերթին առաջ քաշելով փոխադարձ ճանաչողության պահանջը՝ խորհրդային իշխանությունները մի կողմից հարկ էին համարում ամրապնդել կապերը սփյուռքի հետ, իսկ մյուս կողմից սփյուռքը ճանաչելի դարձնել խորհրդային Հայաստանում և վերջինս էլ սփյուռքում: Կոմիտեի ամենակարևոր նպատակը, փաստորեն, հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդումն էր, որը և փորձում էին իրականացնել ամենատարբեր ծրագրերի իրականացմամբ<sup>4</sup>: Մյուս կողմից, ակնհայտ է, որ գաղթօջախներին աջակցելու և այնտեղ հայրենասիրություն սերմանելու խնդիրները հետապնդելիս Կոմիտեն նպատակ

\* Հոդվածը ներկայացվել է 29.11.2020 թ., գրախոսվել՝ 05.12.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.12.2020 թ.:

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱՎ), ֆոնդ 875, ցուցակ 1, գործ 2, թուղթ 1-2:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 16, գ. 1, թ. 1-3:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 1:

<sup>4</sup> Տե՛ս Եղիապարյան Ա., Հայրենիք-սփյուռք հարաբերությունների գերակա ուղղությունները (1960-ական թվականներից մինչև օրս), «Հայագիտության հարցեր», Ե., 2016, № 3, էջ 97:



ուներ նպաստելու հայապահպանությանը: Այդ էր պատճառը, որ սփյուռքահայ երիտասարդության հետ լայն աշխատանքներ էին իրականացնում թե՛ հայրենիքում և թե՛ սփյուռքում<sup>1</sup>:

Պետք է նշել, որ Կոմիտեի ստեղծումով և գործունեությամբ հայրենիք-սփյուռք նաև կրթամշակութային կապերը աստիճանաբար ստացան մշտական բնույթ<sup>2</sup>: Այդ և նաև հայրենիք-սփյուռք հարաբերությունների սերտացման ու խորացման պատճառով Կոմիտեի գործունեության շրջանը համարվել է հայրենիք-սփյուռք հարաբերությունների պատմության առանձին պատմափուլ<sup>3</sup>:

Կոմիտեի ստեղծումը ողջունվեց սփյուռքի մի հատվածի կողմից: Մասնավորապես, ԱՄՆ-ի հայկական սփյուռքի այսպես կոչված առաջադիմական կազմակերպություններն ու միությունները, մտավորականությունը և մամուլը արագորեն արձագանքել են Կոմիտեի ստեղծմանը: Կոմիտեի ստեղծման առթիվ ԱՄՆ-ի հայ գրականության բարեկամների ընկերության վարչությունը գրել է. «Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի կազմակերպումը մեզ բոլորիս ուրախություն պատճառեց: Ան սահմանված է ըլլալու հոգեկան կամուրջը Սփյուռքի հայրենակարոտ միությունների և հայրենիք միջև...»<sup>4</sup>: Ամերիկահայ առաջադիմական միության օրգան «Լրաբեր» թերթը գրել է. «Սփյուռքահայությունը գոտեպնդող, ճերմակ ջարդին դիմադրելու իր կամքը պողպատող ուրիշ մեկ գործոն մըն է մշակութային կապերու ամրապնդումն ու ընդլայնումը մայր հայրենիքի հետ: Այդ կապերը այնպիսի լայն չափերի հասան, որ անհրաժեշտություն դարձավ սարքելու այս տարի առանձին ղեկավար կազմակերպություն մը Սփյուռքահայության մշակութային կապի կոմիտեն՝ իր զանազան բաժիններով և հանձնախումբերով»<sup>5</sup>: Ողջույնի և դրվատանքի սրտագին խոսքերով հանդես եկան նաև ամերիկահայ գրողներ և մտավորականներ: Կոմիտեի կազմության առթիվ շնորհավորանքների և ողջույնի իրենց խոսքն ասացին ամերիկահայ արձակագիրներ Բենիամին Նուրիկյանը, Յամաստեղը, Չավեն Սուրմեյանը, Էդվարդ Բոյաջյանը, Կարապետ Սիտալը, Ենոք Արմենը և ուրիշներ: Արխիվում եղած նամակագրությունից և սփյուռքի թերթերի հրապարակումներից կարելի է կարծիք կազմել, որ Կոմիտեի ստեղծումը և գործունեությունը մեծ ոգևորություն էին առաջ բերել ամերիկահայության մեջ<sup>6</sup>:

Պետք է նշել, որ Կոմիտեի աշխատանքներն ըստ համայնքների երբեմն էապես տարբերվել են, քանի որ յուրաքանչյուր սփյուռքահայ համայնք ուներ ուրույն դիմագիծ, հասարակական կազմակերպությունների առանձին կազմ, հայապահպանության հիմնահարցերի տարբերություններ, հայրենիքի հետ կապերի տարբեր առանձնահատկություններ: Այս առումով հետաքրքրական է ԱՄՆ-ի հայ համայնքի պարագան, որի հետ հարաբերություններում Կոմիտեն դրսևորել է առանձնահատուկ մոտեցումներ:

Առհասարակ, Կոմիտեի հիմնադրումից հետո սփյուռքում և, մասնավորապես, ԱՄՆ-ում, ամենաջերմն «առաջադիմական» կազմակերպությունների և անհատ գործիչների հետ կապերն էին: Սփյուռքի կոմիտեի համար առաջադիմական էին համարվում տեղի կոմունիստները, ՅԲԸՄ-ն, ՍԴԳԿ-ն, ՌԱԿ-ը: ԱՄՆ-ի հայ «առաջադիմական» կառույցներից էր 1942 թ. կազմավորված Ամերիկահայ ազգային խորհուրդը, որի կազմի մեջ մտնում էին առաջադիմական բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչները: Խորհուրդն իր առաջ խնդիր էր դրել հողային դատի հետապնդումը և մշակութային սերտ կապերի հաստատումը

<sup>1</sup> Տե՛ս «Սովետական Հայաստան», 1971, № 4, էջ 22-23:

<sup>2</sup> Տե՛ս Дятлов В., Мелконян Э., Армянская Диаспора: очерки социо-куль-турной типологии, Е., 2009, с. 167.

<sup>3</sup> Տե՛ս Եղիապարյան Ա., Հայկական սփյուռքի պատմության պարբերացումը, «Հայագիտության հարցեր», 2014, № 2, էջ 43:

<sup>4</sup> Տե՛ս «Սովետական Հայաստան», 1964, № 7:

<sup>5</sup> Տե՛ս Մելիքսեթյան Յ., Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Ե., 1985, էջ 370:

<sup>6</sup> Տե՛ս Գասպարյան Ս., Սփյուռքահայ մշակութային և հայրենակցական միությունները արդի շրջանում, «Պատմաբանասիրական հանդես», 1970, № 3, էջ 274-283:

Խորհրդային Հայաստանի հետ<sup>1</sup>: Միության նախագահն էր Վահան Ղազարյանը, իսկ անդամների թիվը հասնում էր մոտ 1000-ի: Ամեն տարի հրավիրում էր համագումար՝ բոլոր մասնաճյուղերի ներկայացուցիչների մասնակցությամբ: Համագումարում քննարկում էին ամերիկահայությանը հուզող հարցերը: Խորհուրդը հրատարակում էր «Լրաբեր» թերթը Երևան-Յորթում, որի խմբագիրն էր Մարտիկ Մարտենցը<sup>2</sup>:

ԱՄՆ-ում գործում էին հայկական բազմաթիվ հասարակական կազմակերպություններ: Մասնավորապես, բազմաթիվ էին ԱՄՆ-ում գործող հայրենակցական միությունները: Կոմիտեի ակտիվ աշխատանքի շնորհիվ հայրենակցական միություններից Հայաստանի տարբեր հաստատությունների համար դրամական հատկացումներ են կատարել՝ Արաբկիրի միությունը՝ Արաբկիրի քիմիական չոր մաքրման ֆաբրիկայի համար սարքավորում գնելու նպատակով (մինչև 150.000 դոլար), Համասերաստահայ վերաշինացը՝ ՀՍՍՐ գիտությունների ակադեմիայի բիոքիմիայի լաբորատորիային ինչպես և հիվանդանոցների համար գիտական և բժշկական գործիքներ գնելու (75.000 դոլար), Մալաթիայի կրթասիրաց ընկերությունը՝ Նոր Մալաթիայի հիվանդանոցի երեք սրահների կահավորման համար (30-35.000 դոլար), Համաբղեցիական ու համախարբերոցիական միությունները և այլն: 1965 թ. Կոմիտեն Հայաստան այցելելու հրավեր ուղարկեց 10 հայրենակցական միությունների ներկայացուցիչների: Հայաստան է եկել որպես կոմիտեի հյուր՝ Մալաթիայի կրթասիրաց ընկերության քարտուղար Սեդրակ Տանտիկյանը, Համախարբերոցիական միության ներկայացուցիչ Հարություն Խոյիկյանը, Արաբկիրի միության ներկայացուցիչ Արամ Միրիճանյանը, Համասերաստահայ վերաշինաց միության քարտուղար Գաբրիել Սերոբյանը, Ամերիկահայ միջհայրենակցական միության ներկայացուցիչ Մալեմեյանը: Կոմիտեի նախաձեռնությամբ բարձրացվել են հայրենակցականներին հուժող մի շարք հարցեր, որոնք դրական են լուծվել կառավարության կողմից և մեծ խանդավառություն առաջացրել հայրենակցական միությունների շրջանում, օրինակ՝ Նոր Մալաթիայի անունով հիվանդանոցի անվանակոչումը, Համասերաստիական միության առաջարկով Երևանում Դ. Վարուժանի անունով դպրոցի անվանակոչումը<sup>3</sup>:

Գործունեության հենց սկզբում Կոմիտեն մշակել էր Հյուսիսային ամերիկայի գաղթօջախներում և հատկապես ԱՄՆ-ում անհատների հետ տարվող աշխատանքային ծրագիր: Ըստ այդ ծրագրի՝ 1966 թ. նախատեսվում էր.

1. ճշտել ամերիկյան մայրցամաքի՝ Կոմիտեի հետ կապ հաստատած անհատների կապերի ցուցակը,
2. հավաքել տեղեկություններ այդ անհատների մասնագիտության, քաղաքական հայացքների, արվեստի և գրականության բնագավառներում նրանց ունեցած նախասիրությունների և այն մասին, թե ի՞նչ բնույթի գրականություն է նրանց հետաքրքրում,
3. փորձել ճշգրիտ տեղեկություններ ստանալ մայրցամաքի գաղութների հայության թվի մասին և տարվա ընթացքում կազմել գաղթօջախները բնութագրող տեղեկանքներ՝ այդ նպատակով օգտագործելով լույս տեսնող մամուլն ու գրականությունը,
4. կազմել Ամերիկյան մայրցամաքի՝ կոմիտեի հետ կապված անհատների քարտարան, Հայաստան հրավիրել ամերիկահայ հասարակական գործիչ, հրապարակախոս Լևոն Մարտիրոսյանին, Հարվարդի համալսարանի հայագիտական ֆոնդի նախագահ Մանուկ Յանկի (Մալեմեյան), Բոսթոնի համալսարանի դասախոս, պատմաբան, գրականագետ Եղիշե Չրաքյանին, Կորդոբայի մշակութային միության մասնաճյուղի նախագահ հայտնի հասարակական գործիչ Գրիգոր Թաթյանին (Արգենտինա)<sup>4</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Համապասսյան Վ., *Էջեր հայ գաղթավայրերի պատմությունից, Ե.*, «Մուղնի» հրատարակչություն, 2015, էջ 196:

<sup>2</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 41, թ. 27:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում. գ. 37, թ. 218-220:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 2, գ. 130, թ. 1:

Ի սկզբանե Կոմիտեն նամակագրական կապ է հաստատել ԱՄՆ-ում ապրող և ստեղծագործող տարբեր հայազգի արվեստագետների հետ: Այսպես, սփյուռքից ստացվող նամակների մեջ մեր արվեստագետ հայրենակիցները պատրաստակամություն էին հայտնում օգտակար լինել հայրենի մշակույթին: Այդպիսի նամակ է ստացվել օրինակ ամերիկահայ Միհրան Թումանյանից: Վերջինս Կոմիտասի հինգ նշանավոր սաներից մեկն էր: Սկսած 1926 թ. նա նվիրվել է հայ ժողովրդական երգի հավաքման շնորհակալ գործին, կուտակել է պատկառելի մի ժառանգություն, որտեղ հաշվվում էր շուրջ 3450 ստեղծագործություն: Մյուս կողմից, հայրենիք-սփյուռք հարաբերությունների մշակութային և բարեկամական բարելավման համար նշանակություն ունեին նաև փոխայցելությունները: Կոմիտեի հրավերով Հայաստան այցելեց ամերիկահայ երիտասարդ երաժիշտ Ռոբերտ Ժամկոչյանը, որի ելույթը կազմակերպվեց Ֆիլիարմոնիայի մեծ դահլիճում: Միաժամանակ, Կոմիտեն խնդիր էր դրել ձեռք բերել հնարավորինս շատ պատմական արժեք ունեցող իրեր և տեղափոխել Հայաստան: Այդպիսիներից էր Թումանյանի ժառանգությունը, որը բացառիկ արժեք էր ներկայացնում, և Կոմիտեն այն հայրենիք տեղափոխելու համար զգալի ջանքեր ներդրեց: ԱՄՆ-ից Վահան Ղազարյանի միջոցով Հայաստան տեղափոխվեցին նկարիչ Եղիա Գասպարյանի 8 գործերը, իսկ Հարություն Ղազարյանի միջոցով՝ Վանո Խոջաբեկյանի 35 աշխատանքները<sup>1</sup>:

Կոմիտեի՝ 1969 թ. հաշվետվության մեջ տեսնում ենք, որ հատուկ ուշադրություն է դարձվել հայկական գաղթաբանների հետ հաստատված մշակութային կապերի զարգացմանը՝ նպատակ ունենալով այդ կապերն օգտագործել «միջազգային իմպերիալիզմի» ազդեցության ոլորտի երկրներում ապրող հայ ազգաբնակչությանը հասցնելու ճշմարտությունը Խորհրդային միության և մասնավորապես Հայաստանի հանրապետության մասին: Դա կոմիտեի համար ամենագլխավոր խնդիրներից մեկն էր, եթե ոչ ամենագլխավորը, ցույց տալ Խորհրդային միության առաջադիմությունը և վերելքը: Կոմիտեն մեծ կարևորություն էր տալիս Խորհրդային հոբեյանական միջոցառումների նշելուն: Մասնավորապես, կարելի է առանձնացնել սփյուռքահայ մի շարք շրջանակների կողմից Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի նշումը: Այդ առթիվ Կոմիտեն արտասահման է առաքել քարոզչական նյութեր, իսկ Հայաստանում տեղի ունեցած տոնակատարությանը մասնակցելու համար հրավիրել մեծ թվով սփյուռքահայերի: Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի տոնակատարությանը մասնակցելու համար Կոմիտեի հրավերով Հայաստան են ժամանել 701 հյուրեր<sup>2</sup>: Նման աշխատանքի կազմակերպումը քաղաքական հատուկ կարևորություն էր ներկայացնում հատկապես այն գաղթաբաններում, որտեղ ուժեղ էր «հակախորհրդային պրոպագանդան», ամենից առաջ՝ «միջազգային իմպերիալիզմի» միջնաբերդ ԱՄՆ-ում: Նույն տարում նկատելիորեն ընդլայնվեցին կապերը հայկական առաջադիմական և հայրենասիրական կազմակերպությունների ու անհատ գործիչների հետ: Նորանոր կապեր հաստատվեցին հայրենակցական, մշակութային միությունների, հասարակական գործիչների, գիտնականների, արվեստագետների հետ, որոնք ողջունում են Կոմիտեի գործունեությունը, արձանագրում նրա առաջադրած խնդիրներին ու հնարավորին չափ աջակցում: Եթե 1969 թ. հունվարին Կոմիտեն կապ ուներ 3696 հայի, ապա 1970 թ. հունվարի 1-ի դրությամբ՝ արդեն 892 կազմակերպության 3670 անհատի հետ, ունենալով 4562 հասցե<sup>3</sup>: Առանձնապես նկատելի է ամերիկյան մայրցամաքի հայկական համայնքների հետ ունեցած կապերի ընդլայնումը: 1969 թ. հունվարին համապատասխան բաժնի գծով Կոմիտեն ուներ 1170 հասցե, իսկ դեկտեմբերին՝ 1564: Կոմիտեն հոգ էր տանում, որ սփյուռքահայ կազմակերպություններին ու կարևոր անհատները նամակագրական աշխույժ կապի մեջ լինեն ոչ միայն Կոմիտեի, այլև Երևանի զանազան գիտական ու մշակութային հաստատությունների ու ուսումնական հաստատությունների հետ: Կոմիտեի 1969 թ. ընթացքում սփյուռքից

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 24-26:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 28, թ. 2:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 4, գ. 17, թ. 2:

ստացել է 1488 և սփյուռք է ուղարկել 1488 Նամակ: Թղթակցական կապը առավել աշխույժ բնույթ է կրել ԱՄՆ-ի հայ գաղութի հետ: Ամերիկյան երկրների բաժնի գծով ստացվել է 775 և ուղարկվել 775 Նամակ: 1969 թ. զգալիորեն ավելացել են կազմակերպությունների ու անհատների հասցեներին կատարվող առաքումները: Չնայած ապարատի աշխատակիցների փոքրաթիվ լինելուն՝ նկատի ունենալով աշխատանքի մեծ ընդգրկումը թե՛ ծավալով և թե՛ բովանդակությամբ, կոմիտեն շարունակ ջանում է նորանոր կապեր հաստատել այլևայլ կազմակերպությունների, բարձրագույն դպրոցներում գիտահետազոտական հաստատություններում աշխատող և հայ համայնքներին սերտորեն կապված անվանի գիտնականների, գործիչների ինչպես նաև ճանաչման արժանացած արվեստագետների հետ: Գիշտ է հասցեների մեծացումը ստեղծում էր լրացուցիչ ծանրաբեռնվածություն, որը հնարավորություն չէր տալիս ավելի մեծ խորությամբ ծանոթանալ բոլոր կազմակերպությունների ու անհատների գործունեության հետ, սակայն հասցեների թվի մեծացումը մնում է որպես կարևոր խնդիր<sup>1</sup>: Գաղթօջախներ են ուղարկվել 13.000 օրինակ «Հայրենիքի ձայն», 5635 օրինակ «Սովետական Հայաստան» և 5600 օրինակ այլ թերթեր ու ամսագրեր: Բացի այդ, մեկ տարվա ընթացքում ուղարկվել է ավելի քան 27.000 օրինակ գեղարվեստական ու քաղաքական գրականություն, ինչպես նաև արվեստագիտական բնույթի գրքեր և երաժշտական նոտաներ: Հայկական դպրոցների համար ուղարկվել է 40.000 օրինակ (14 անուն) դասագիրք՝ յուրաքանչյուրից 10.000 օրինակ (բոլոր գաղթօջախները ուղարկվել են նաև մեծ քանակությամբ ձայնապնակներ, 3800 հատ հայկական երաժշտության) մազնիտոֆոնային ձայնագրություններ, լուսանկարային թեմատիկ ցուցահանդեսներ: Հայկական տարազի նմուշներ են ուղարկվել ԱՄՆ և Կանադա, հատկապես ուշագրավ է Վաշինգտոնում գործող «Վանիկ» պարախումբը, որը մեծ աշխատանք էր տանում հայ պարն ու երգը ազգակիցներին ու օտարներին ներկայացնելու համար, իսկ խմբի ղեկավարն էր Էլանոր Սեդա Կարաօղլյանը<sup>2</sup>: Մշակութային միություններին այս կամ այն ձեռնարկումների առիթով ուղարկվել են զեկուցումների տեքստեր և այլ անհրաժեշտ նյութեր:

Ուշադրության կենտրոնում պահելով ստացված Նամակների մշակումը, դրանց ընթացք տալը ու պատասխան ուղարկելը, ինչպես նաև կազմակերպությունների ու անհատ գործիչների հասցեներին մամուլ ու գրականություն ուղարկելու գործը՝ Կոմիտեն առանձնակի նշանակություն էր տալիս վերադաս մարմինների որոշմամբ հորհրդային Հայաստան ժամանած հյուրերի հետ տարվող աշխատանքներին: 1969 թ. զանազան առիթներով հորհրդային Հայաստան են հրավիրվել 165 սփյուռքահայ մշակութային ու հասարակական գործիչներ, որոնց հետ Կոմիտեն աշխատել է առանձին ծրագրով: Հյուրերի հետ տարվող աշխատանքներում ընդգրկվել են ոչ միայն խորհրդականներն ու բաժնի վարիչները, այլև կոմիտեի նախագահության անդամները, անհրաժեշտության դեպքում նաև՝ հանրապետության ճանաչված գիտնականները և մշակութային գործիչները: Իբրև հյուր մեկուկես ամսով Երևան է հրավիրվել ԱՄՆ-ի Ստենֆորդ համալսարանի անվանի ֆիզիկոս Չավեն Կիրակոսյանը, որն օգտակար հանդիպումներ է ունեցել նաև Երևանի ֆիզիկայի ինստիտուտում և զեկուցումներով հանդես եկել թե՛ Երևանում և թե՛ Մոսկվայում: Հայրենիք են հրավիրվել նաև Նյու Յորքի «Լրաբեր» թերթի խմբագիր Վահան Ղազարյանը, Ամերիկահայ առաջադիմական միության կենտրոնական վարչության նախագահ Ալբերտ Ճանճիկյանը, ԱՄՆ-ի «Նոր Աշխարհ» հայկական թերթի խմբագիր Սամվել Թումայանը, հասարակական գործիչ Հարություն Հազարյանը, ով 305 արժեքավոր ձեռագիր է նվիրել Երևանի Մատենադարանին: Կոմիտեն մեծ թվով հյուրեր ունեցավ Հ. Թումանյանի և Կոմիտասի ծննդյան 100-ամյա հոբելյանների առիթով (շուրջ 50 հյուր): Նրանց թվում էին անվանի գրողներ, երաժշտագետներ:

<sup>1</sup> *Տե՛ս նույն տեղում, թ. 3:*

<sup>2</sup> *«Հայրենիքի ձայն», 3 դեկտեմբերի, 1972, № 49:*

Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ամենամյա 40-օրյա դասընթացների մասնակցելու համար տարբեր երկրներից (Լիբանան, Կիպրոս, ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա, ֆրանսիա և այլ) ժամանած 37 ուսուցիչների հետ կոմիտեն և ՀՍՍՀ լուսավորության մինիստրությունը աշխատել են նախապես մշակված ծրագրով: Խորհրդային Հայաստանի պիոներական ճամբարներում հանգստանալու համար 1969 թ. օգոստոս 1-ին սփյուռքի տարբեր գաղութներից ժամանել են 184 հայ դպրոցականներ: Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում և տեխնիկումներում սովորող հայ ուսանողների թիվը 1969 թ. կազմել է շուրջ 350 մարդ, որոնցից ԱՄՆ-ից՝ 7<sup>1</sup>: Ընդհանուր առմամբ, 1958-1980 թթ. ԱՄՆ-ից Խորհրդային Հայաստանի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական հաստատություններում սովորել է 29 երիտասարդ՝ ընդհանուր 846-ից<sup>2</sup>:

Կոմիտեի գործունեության տարիներին իբրև զբոսաշրջիկ ԱՄՆ-ից Խորհրդային Հայաստան են ժամանել առաջադիմական կազմակերպությունների խմբեր: 1969 թ. Կոմիտեն կազմակերպել է նկարիչներ Բյուզանդ Թոփայանի, Ռիչարդ Ժերանյան (Ֆրանսիա), Մայտա Մնդիկյան (Իտալիա), Սալբի Մավյանի (ԱՄՆ), անվանի լուսանկարիչ Հարություն Գավուցյանի (Կանադա) գեղանկարչական, գրաֆիկական, գործերի և գունավոր լուսանկարների ցուցահանդեսները, որոնք լայն արձագանք գտան հայրենիքում և սփյուռքում: Միևնույն ժամանակ, տեղի էին ունենում այցելություններ Խորհրդային Հայաստանից ԱՄՆ: Այն ժամանակ անվանի երգչուհի Լուսինե Չափարյանը և դաշնակահարուհի Մարիաննա Հարությունյանը երկամսյա համերգային շրջագայություն կատարեցին ԱՄՆ և Կանադա<sup>3</sup>:

Թումանյանի և Կոմիտասի հոբբեյանների առթիվ Կոմիտեին մոտ կանգնած հայազգի Հակոբ Թանկյանը իր միջոցներով հրատարակեց անգլերեն 2 գիրք, որոնք անգլիախոս հայ երիտասարդությանը և օտարներին ծանոթացնում էին Թումանյանի ու Կոմիտասի կյանքի ու գործունեության հետ: Անգլերեն և հայերեն շքեղ գրքույկ է հրատարակել Նյու-Յորքի հայ եկեղեցու առաջնորդարանը նվիրված Կոմիտասին: ԱՄՆ-ում բնակվող Հրաչ Ղազարյանը և դոկտոր Սաթրլենդը 1969 թ. Երևանի պետական օպերայի սիմֆոնիկ նվագախմբին և կոնսերվատորիային նվիրել են 11 արժեքավոր ջութակ, որոնցից մի քանիսը 120-150 տարվա հնություն ունեին: Նույն անձինք Մատենադարանին են նվիրել մեկ արժեքավոր ձեռագիր:

Կոմիտեի գործունեության տարիներին մեծացել էր նաև Խորհրդահայ բուհերի նշանակությունը, որտեղ կատարելագործվելու խնդրանքով Կոմիտեին դիմել են մի շարք ամերիկահայեր: 1970 թ. Երևանի պետական համալսարանում մեկ տարով կատարելագործվելու համար Կոմիտեին դիմել է Թավթսի համալսարանից Ռոբերտ Պետրոսյանը: Կատարելագործվելու համար ԱՄՆ-ից դիմել են նաև ջութակահար Հենրի Գրիգորյանը և մի քանի այլ երիտասարդներ, որոնք նպատակ ունեին հետագայում ծառայել ԱՄՆ-ի հայ կրթական գործին:

Կոմիտեն սերտ կապի մեջ է բոլոր գաղութներում գործող հայկական դպրոցների հետ, որոնք վերանայել են իրենց ուսումնական ծրագրերը և հարմարեցրել Սովետական Հայաստանից ուղարկված դասագրքերին: 1969 թ. ԱՄՆ-ում և Կանադայում լայն ծավալ էր ստացել նախորդ տարում սկսված հայկական ամենօրյա դպրոցներ հիմնելու նպատակով սկսված շարժումը, որը գլխավորում էր Հայ բարեգործական ընդհանուր միությունը: Կոմիտեն ողջունեց այդ կարևոր շարժումը և խոստացավ դպրոցներին ապահովել դասագրքերով ու ցուցաբերել անհրաժեշտ օգնություն:

1971 թ. Կոմիտեի օգնությամբ տուրիզմի միջոցով ԱՄՆ-ից հայրենիք են եկել 22 երիտասարդներ, որոնց դասավանդվել է հայերեն լեզու, երգ և պար: Երիտասարդներն այնուհետև գաղութում տարել են քարոզչական աշխատանք, որի արդյունքում 1972 թ. ամռանը ցանկություն է հայտնում Երևան ժամանել ևս 100 երիտասարդ: 1971 թ. Երևանում էր տու-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 6, գ. 1, թ. 1-5:

<sup>2</sup> Տե՛ս «Սովետական Հայաստան», 1980, № 12, էջ 22-23:

<sup>3</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, գ. 4, գ. 17, թ. 9:

րիստական խումբ Նյու-Յորքից՝ բաղկացած երեք երիտասարդական կազմակերպություններից: Իր այցելությունը խումբը վարեց արշավ «Մենք տեսանք Հայաստանը» լողունգով: Վերադառնալով ԱՄՆ այդ խումբը Խորհրդային Հայաստանի մասին ելույթներ ունեցավ հայկական տարբեր համայնքներում<sup>1</sup>:

1971 թ. ԱՄՆ այցելեցին 2 տուրիստական մասնագիտացված խմբեր: Հայկական գաղութի հետ կապերը ամրապնդելու նպատակով դրական դեր խաղաց ակադեմիկոս Վ. Համբարձումյանի այցը ԱՄՆ: ԱՄՆ այցելեցին նաև բիոքիմիայի իստիտուտի տնօրեն պրոֆ. Գ. Բունիաթյանը և համալսարանի ռեկտոր Մ. Ներսիսյանը: Այդ տարի Կոմիտեն ունեցավ մի շարք կարևոր հանդիպումներ Հայաստան այցելած ԶԲԸՄ-ի ղեկավար Ալեք Մանուկյանի, «Արմենիան Դայջեստ» (Նյու-Յորք) թերթի խմբագիր Հակոբ Թանկյանի, «Զաջ Նազար» (Լոս-Անջելոս) թերթ խմբագիր Յովհաննես Բալայանի, «Արմենիան ռիպորթեր» (Նյու-Յորք) թերթի խմբագիր Էդվարդ Պողոսյանի, «Արարատ» (Նյու-Յորք) թերթի խմբագիր Դավիթ Խերոյանի, «Լրաբեր» (Նյու-Յորք) թերթի խմբագիր Վահան Ղազարյանի հետ: Հանդիպումներ եղան նաև ամերիկահայ գիտնականներ Ռիչարդ Յովհաննիսյանի (Կալիֆորնիայի համալսարան), Հրայր Դոկմեջյանի (Նյու-Յորքի համալսարան), ֆիզիկոս Պերճ Արշակ Աղջախի, մաթեմատիկոս Ջորջ Ատոմյանի հետ: Հայաստան այցելեցին նաև երիտասարդական, սպորտային, կանանց, հայրենակցական միությունների ղեկավարներ ԱՄՆ-ից: Հատկանշական է, որ 1972 թ. կոմիտեն պլանավորում էր ԱՄՆ-ում կազմակերպել Հայոց լեզվի, հայկական երգի ու պարի մեկամյա դասընթացներ 25 հոգուց բաղկացած խմբի համար: Միաժամանակ, Կոմիտեի տեղեկագրերում մենք տեսնում ենք, որ 1972 թ օգոստոսին կոմիտեի և ՀՍՍՀ Լուսավորության մինիստրության հրավերով վերապատրաստման դասընթացներին մասնակցելու համար Հայաստան են ժամանել ուսուցիչների 11 խումբ՝ թվով 32 հոգի, որոնց թվում՝ նաև ամերիկահայ ուսուցիչներ: Այդ տարի անվանի քանդակագործ Խորեն Տեր-Հակոբյանը Երևանում պատրաստած իր քանդակը, ինչպես նաև ԱՄՆ-ից բերած այլ թանկարժեք աշխատանքներ, նվիրեց Հայաստանի պետական պատկերասրահին: Գուրգեն Յանիկյանը պատկերասրահին նվիրեց գեղարվեստական երկու բարձրարժեք նկար, որից մեկը Սարտիրոս Սարյանի վաղ շրջանի և կորած համարվող կտավներից: 1972 թ. աշխատանք է տարվել Համաբողջական և Զրեի հայրենակցական միությունների միջոցով ԱՄՆ-ից և Կանադայից կազմակերպելու զբոսաշրջիկների 90 հոգուց բաղկացած խմբի այցելություն Երևան և Նոր Գեղի: Նոր Գեղիի 10-րդ տարեդարձի առթիվ հայրենակցական միությունները Խորհրդային Հայաստանին նվիրեցին 50.000 դոլարի բժշկական և գիտական սարքավորումներ<sup>2</sup>:

1972 թ. Այնթափի հայրենակցական միության կենտրոնական վարչության (ԱՄՆ) նախաձեռնությամբ նշվեց Այնթափի անվանակոչության 2-րդ տարեդարձը: Հայրենակցական միությունը կապրոնե վարագույրների և ժանյակների ֆաբրիկայի հիմնարկեքի պաշտոնական արարողության ժամանակ նվիրեց համապատասխան մեքենաներ, որոնց արժեքը կազմում էր 240.000 դոլար:

Կոմիտեն Նկարիչների միության հետ միասին կազմակերպել է ԶԲԸՄ Ամերիկայի շրջանակի կենտրոնական վարչության հովանավորությամբ Երևան ժամանած նկարչուհի Նունուֆար Պողոսյանի ստեղծագործությունների, ինչպես նաև նկարիչ և ճարտարապետ Լևոն Յովհաննիսյանի աշխատանքների լուսապատկերների ցուցադրությունը Կոմիտեի դահլիճում: Կազմակերպվել է նաև նկարչուհի Ն. Պողոսյանի 18 նկարների փոխադրությունը Երևան իբրև նվեր: Կոմիտեն աշխատանք է տարել նաև Նյու-Յորքի հայ երիտասարդական կազմակերպության «Երիտարշավ»-ի խմբի հետ, որը վերադառնալով՝ հայաշատ քաղաքներում իր պատրաստած կինոնկարն է ցուցադրել և պատմել Խորհրդային Հայաստանի հաջողությունների մասին<sup>3</sup>: Հետաքրքրական էր Կոմիտեի նախագահի ավելի քան մեկ

<sup>1</sup> Տե՛ս «Հայրենիքի ծայն», 2 օգոստոսի, 1972, № 31:

<sup>2</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 6, գ. 3, թ. 10:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 13:

ամիս տևող ուղևորությունը ԱՄՆ: Վ. Համազասայանին ԱՄՆ այցելելու պաշտոնական հրավեր են ուղարկել Արաբկիրի և Համաբալուցիական հայրենակցական միությունները: Նյու-Յորքում ստեղծվեց ընդունելության կենտրոնական հանձնախումբ: Վ. Համազասայանը այցելեց ԱՄՆ-ի բոլոր հայաշատ քաղաքները՝ Նյու-Յորք, Բոստոն, Լոս-Անջելոս, Ֆրեզնո, Դետրոյթ, Ֆիլադելֆիա, Փրովիդենս, Վաշինգտոն, Չիկագո, Սան-Ֆրանցիսկո և այլ: Նրա այցելությունը լայնորեն լուսաբանվել է ԱՄՆ-ի հայկական մամուլում<sup>1</sup>:

1972 թ. ԱՄՆ են այցելել Գևորգ Էմինը, ակադեմիկոս Կասյանը, Մատենադարանի տնօրենի տեղակալ Բաբկեն Չուգասոյանը, Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի դասախոս, գրող Բոգդան Վերոյանը, ամբիոնի վարիչ Վալտեր Դիլոյանը, ռուսաց և օտար լեզուների ինստիտուտի պրոռեկտոր Յուրի Մռավյանը, բժշկական ինստիտուտի ռեկտոր Էմիլ Գաբրիելյանը, գիտնական Լ. Միրզոյանը, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի բաժնի վարիչ Պարզև Մարտիրոսյանը<sup>2</sup>:

1972 թ. Լոս-Անջելոս քաղաքում հասարակական գործիչ Արշակ Տիգրանյանի նախաձեռնությամբ ստեղծվեց «Հայ սիմֆոնիկ երաժշտության ընկերություն», որը Կոմիտեից խնդրեց կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի և այլ կոմպոզիտորների սիմֆոնիկ գործերի նոտաները և ջութակահար Վարուժան Գոճյանի միջոցով նախապատրաստեց մեծ համերգ՝ ամերիկահայերին ծանոթացնելու հայ սիմֆոնիկ երաժշտության հետ<sup>3</sup>: 1972 թ. հունվարին տեղի ունեցավ համերգ, որը բարձր գնահատության արժանացավ ոչ միայն ԱՄՆ-ի հայկական, այլև օտար թերթերում: Առաջադիմական ուժերի նախաձեռնությամբ նաև Արամ Խաչատրյանի այցելությունը օգտագործվեց հորհրդային Հայաստանի հաջողությունները քարոզելու համար:

Ըստ 1975 թ. Կոմիտեի միջոցառումների ծրագրի՝ հայկական համայնքն ԱՄՆ-ում ամենամեծաքանակն է բոլոր հայկական գաղութների մեջ: ԱՄՆ-ում բնակվում էր շուրջ 400-450.000 հայ<sup>4</sup>: ԱՄՆ-ում մեծ թիվ էին կազմում հայազգի գիտնականները, իրավաբանները, բժիշկները, համալսարանների, քոլեջների և դպրոցների պրոֆեսորներն ու ուսուցիչները: Միայն համալսարանի դասախոսների, գիտահետազոտական հաստատությունների ու լաբորատորիաների գիտաշխատողների թիվը անցնում է 800-ից: Կային զգալի թվով խոշոր արդյունաբերողներ, գործարանատերեր ու ագարակատերեր: 1975 թ. դեկտեմբերին Ամերիկյան երկրների բաժնի գծով կոմիտեն կապ ուներ 375 կազմակերպությունների և 2435 անհատների հետ: Կոմիտեն 1975 թ. ամռանը կազմակերպեց մեկամսյա դասընթաց՝ ԱՄՆ-ի բարեկամական շրջանակի երիտասարդական կազմակերպության հատուկ տուրիստական խմբի համար: Ամերիկահայ երիտասարդության հետ տարվող աշխատանքի այս ձևը լավ արձագանք գտավ ԱՄՆ-ում և այլ երկրներում<sup>5</sup>:

1978 թ. Կոմիտեի միջոցով փաթեթավորվել և սփյուռքահայ համայնքներ է ուղարկվել 20 հազարից ավելի գեղարվեստական, հայագիտական, քաղաքական, մանկական և այլ բնույթի գրականություն: Գրականության հետ միասին շուրջ 6700 հասցեներով սփյուռք է ուղարկվել թերթ և ամսագիր<sup>6</sup>:

1979 թ. հոկտեմբերի 9-ին Կանադա և ԱՄՆ մեկնեց Կոմիտասի անվան քառյակը, Կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Ա. Մարտիրոսյանի գլխավորությամբ: Հոկտեմբերին Երևանում տեղի ունեցան ամերիկահայ նկարիչների ընկերության և ամերիկահայ նկարիչ Լևոն Ժամկոչյանի ստեղծագործությունների ցուցահանդեսները<sup>7</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «Հայրենիքի ծայն», 14 հունիսի, 1972, № 24:

<sup>2</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 6, գ. 3, թ. 23:

<sup>3</sup> Տե՛ս «Հայրենիքի ծայն», 3 հունիսի, 1970, № 22:

<sup>4</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 6, գ. 15, թ. 2-4:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 19, թ. 20-22:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 8, գ. 233, թ. 2:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 234, թ. 1-4:

1980 թ. հայրենիքում էր գտնվում ամերիկահայ նշանավոր քանդակագործ Խորեն Տեր-Յարությունյանը՝ տիկնոջ հետ: Ճանաչված արվեստագետը եկել էր՝ ստեղծելու Խորհրդային Հայաստանի վերածնունդը խորհրդանշող քանդակ, որ դրվելու էր գլխավոր պողոտայի վրա: Հայրենիքում էր գտնվում նաև Ամերիկահայ գրականագետ Լևոն Մեգերյանը: Նրան է պատկանում Ավետիք Իսահակյանի հիշատակարանի թարգմանությունը: Նա եկել էր Հայաստան ծանոթանալու Իսահակյանի արխիվին: Նույն տարում Հայրենիք եկան տաղանդավոր երգեհոնահար Պերճ ժամկոչյանը, երգիչ հասարակական գործիչ Տիգրան ժամկոչյանը՝ իր տիկնոջ և երկու երեխաների հետ: Նրանք պետք է դասախոսություններ կարդային Կոմիտասի անվան երաժշտանոցում և Երևանի պետական համալսարանում<sup>1</sup>:

1982 թ. Կոմիտեի խողովակով հայրենիք են ժամանել ԱՄՆ-ի, Արգենտինայի և Կանադայի 13 մշակութային և հասարակական գործիչներ: Մայիսի 29-ին աշխարհահռչակ գրող Վիլյամ Սարոյանի պատգամի համաձայն նրա աճյունի մի մասը հանձնվեց մայր հողին, որը կատարվեց կառավարական մակարդակով: Այդ տարի Կոմիտեն ընդունել և աշխատանքներ է տարել Կիլիկյան թեմի երիտասարդական խմբի հետ: Ավելացել է տարեկան ԱՄՆ առաքվող գրքերի թիվը, իսկ նամակների թիվը հասել է 620-ի<sup>2</sup>:

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն իր առջև դրված խնդիրներն իրականացնելու նպատակով կապեր հաստատեց ԱՄՆ-ի հայ համայնքի «առաջադիմական» կազմակերպությունների և անհատների հետ: Ամերիկահայության շրջանում Կոմիտեն իրականացրեց ուսուցիչների վերապատրաստում, հայրենիքում երիտասարդների հանգստի կազմակերպում, ուսանողների կրթության ապահովում, փոխայցելությունների կազմակերպում:

***Айк Мартиросян, СОТРУДНИЧЕСТВО КОМИТЕТА ПО КУЛЬТУРНЫМ СВЯЗЯМ С АРМЯНАМИ ДИАСПОРЫ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ США.***

Комитет по культурным связям с армянами диаспоры для выполнения поставленных перед ним задач установил контакты с "прогрессивными" организациями армянской общины Соединенных Штатов. В среде армян Америки Комитет диаспоры осуществлял подготовку учителей, организацию отдыха молодежи на Родине, обеспечение образования для студентов, организацию взаимных визитов. Деятельность Комитета по культурным связям с армянами диаспоры нуждается в углубленном изучении, поскольку он играл уникальную роль в истории Советской Армении, в вопросе установления и укрепления отношений между Родиной и Диаспорой, в ознакомлении общин диаспоры с родной культурой, в сохранении армянской идентичности в диаспоре и национальных черт поколений армянской диаспоры.

***Ключевые слова:*** Комитет, армяне диаспоры, армянская диаспора Америки, помощь, контакты, взаимные визиты, культура, армянская община, земляческие союзы.

***Hayk Martirosyan, COOPERATION OF THE COMMITTEE OF THE CULTURAL RELATIONS WITH ARMENIANS OF DIASPORA WITH THE ARMENIAN COMMUNITY OF THE USA.***

Summarizing it can be noted that for the realization of its goals the Diaspora Committee established contacts with the "progressive" organizations of the Armenian community of United States. In the circle of Armenian-Americans, Diaspora Committee has carried out training of teachers, organization of recreation of young people in their homeland, provision of education for students, organization of reciprocal visits. The activities of Committee for cultural relations with Armenians of Diaspora requires thorough research as it has conducted a unique role during the history of Soviet Armenia, in the

<sup>1</sup> Տէ՛ս նոյն տեղում, գ. 9, գ. 148, թ.4:

<sup>2</sup> Տէ՛ս նոյն տեղում, գ. 151, թ. 6-7:



establishment, strengthening of Homeland-Diaspora relations, in the familiarizing of Diaspora colonies with their native culture, in the preservation of Armenian ethnic identity in Diaspora, in the preservation of the national character of the generations of Armenian Diaspora.

**Key words:** committee, Armenians of Diaspora, Armenian-American community, aid, contacts, reciprocal visits, culture, Armenian colony, compatriotic unions.